



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌՆՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37460) 474110

_____ № 2016-10-19

Ձեռք _____ առ _____ ՄՄ/5815-16

Հայաստանի Հանրապետության

Վերահսկիչ պալատի նախագահ

պարոն Ի.Զաքարյանին

Հարգելի՛ պարոն Զաքարյան,

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 30.09.2016թ. N 02/23.2/41485-16 հանձնարարականի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա 2-րդ կետը՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի խորհրդի 22.09.2016թ. N 28/1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, արտաբյուջետային միջոցների օգտագործման, բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» (այսուհետ՝ Հաշվետվության) Առաջարկություններ բաժնի վերաբերյալ մեր բացատրությունները.

«Հաշվետվության» նյութերը մանրամասն ուսումնասիրվել են և «Հաշվետվության» Առաջարկություններ բաժնով առաջարկված առաջարկությունների ուղղությամբ կոմիտեի կողմից համապատասխան միջոցներ են ձեռնարկվում արձանագրված թերություններն ու բոցթողումները

վերացնելու, անարդյունավետ ծախսերը բացառելու ուղղությամբ: Մասնավորապես՝

1. Կոմիտեն բազմիցս դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ վարձակալության իրավունքով զբաղեցված կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային տորաբաժանումներին պետական սեփականություն հանդիսացող տարածքներ տրամադրելու համար: Այդ աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարության 1400-Ա որոշման համաձայն կոմիտեին տրամադրվեց տարածք՝ «Արմավիր» սպասարկման գրասենյակի գործունեության կազմակերպման համար, որտեղ իրականացվել են 8 934 044 դրամի նորոգման աշխատանքներ և սույն թվականի հոկտեմբեր ամսից սպասարկման գրասենյակը կգործի պետական սեփականություն համարվող տարածքում:

Միաժամանակ հայտնվում է, որ Արմավիրի մարզային ստորաբաժանումը մարզից տեղափոխվելու և Երևանում Մարզերի միավորված ստորաբաժանմանը միացվելու արդյունքում Արմավիր քաղաքում մնացող կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակի համար վարձակալությամբ զբաղեցվեց ավելի փոքր տարածք, որի հետևանքով վարձակալության վճարը նվազեց ամսական 1 500 000 դրամից 280 000 դրամ:

Օպտիմալացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունքում՝ Տավուշի մարզային ստորաբաժանման և «Ախուրյան», «Անի» և «Վայք» սպասարկման գրասենյակների լուծարմամբ, կոմիտեի վարձակալության գծով տարեկան տնտեսումը կկազմի 8 809 400 դրամ՝ չհաշված կոմունալ, էներգետիկ և այլ ծախսերի գծով առաջացած տնտեսումը:

2. Հաշվի առնելով «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի ներկա ծրագրային աշխատանքների մեծ ծավալները, ինչպես նաև շուկայում ձևավորված այլ տնտեսվարող սյուբեկտների գնային քաղաքականությունը, կազմակերպության հիմնական գործառույթներ չհամարվող աշխատանքները մրցույթների արդյունքում կատարվել են այլ կազմակերպությունների կողմից, որոնք ունեն համապատասխան որակավորում տվյալ ոլորտում:

<<Ուսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ում վերապատրաստվում են ինչպես կադաստրի համակարգի, այնպես էլ համակարգում չաշխատող անձինք և ՊՈԱԿ-ում դասավանդումը հասարակական կարգով իրականացվում է կադաստրի համակարգի մասնագետների կողմից: 2015թ-ի մայիսի 6-ին համագործակցության հուշագրեր են ստորագրվել կադաստրի պետական կոմիտեի և չորս բուհերի՝ Երևանի Պետական Համալսարանի, Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի, Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարանի, Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի միջև: Համագործակցության շրջանակներում արդեն իսկ դասընթացներին մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, մարզպետարանների, համայնքների, ԼՂՀ կադաստրի աշխատակիցներ, ինչպես նաև անկախ չափագրողներ, գնահատողներ, գեոդեզիայի և հողաշինարարության ոլորտի մասնագետներ: Նշված գործընթացը շարունակական բնույթ է կրում և տարեցտարի ավելանալու միտում ունի:


3. ՀՀ մարզերում տեսչական ստուգումների անցկացման տարեկան հաստատված ժամանակացույցի համաձայն, գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2015թ. ընթացքում տեսչական ստուգումներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

Իրականացված ստուգումների արդյունքում տեսչության կողմից ՀՀ մարզպետներին ներկայացվել է միջնորդություն 17 300 000 դրամի չափով վարչական տույժ նշանակվելու վերաբերյալ: Մարզպետների կողմից կայացվել է 4 200 000 դրամ գումարի վարչական տույժ նշանակելու որոշում: Նշանակված վարչական տույժերից 2015թ. և 2016թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը 3 750 000 դրամ:

Տեսչության կողմից արձանագրված խախտումների և ՀՀ մարզպետների կողմից կայացված որոշումների և գանձված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ Վարչապետին և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Տեղեկացվում է, որ 2014թ. և 2015թ. թվականների ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում կազմված ակտերը ներկայացվել են նաև ՀՀ դատախազություն:

Հարգանքով՝



Մ. Սարգսյան

Կատարող՝
Ֆինանսատնտեսագիտական
վարչություն ☎060 47 41 04